

**Եվրոպական Միության կողմից ֆինանսավորվող ծրագրերի նկատմամբ
հարկային, մաքսային և այլ պարտադիր վճարների գծով արտոնությունների
կիրառման կարգ**

Հայաստանի Հանրապետության կառավարության 2009թ. սեպտեմբերի 23-ի N 1112-Ն որոշմամբ սահմանվել է Հայաստանի Հանրապետության և Եվրոպական Համայնքների Հանձնաժողովի միջև կնքված շրջանակային համաձայնագրով նախատեսված հարկային, մաքսային և այլ պարտադիր վճարների գծով արտոնությունների կիրառման կարգը:

ՀՀ էկոնոմիկայի նախարարի 2009թ. հոկտեմբերի 28-ի թիվ 892-Ա հրամանով հաստատվել է Հարկային մաքսային և այլ պարտադիր վճարների գծով արտոնությունների կիրառման նպատակով տեղեկանքի ներկայացման, հաստատման, տրամադրման և հաշվառման կարգը:

Համաձայնագրով նախատեսված հարկային, մաքսային և այլ պարտադիր վճարների գծով արտոնությունները նշանակում են.

1. հարկվող շրջանառության ազատում՝ ավելացված արժեքի հարկից
2. ներմուծվող ապրանքների ազատում մաքսատուրքից
3. ոչ ռեզիդենտ կազմակերպությունների ազատում՝ շահութահարկից (այդ թվում՝ եկամտի վճարման աղբյուրի մոտ)
4. ապահովադիրների ազատում՝ ֆիզիկական անձանց վճարվող եկամուտներից՝ գործատուի պարտադիր սոցիալական ապահովության վճարները հաշվարկելու, գանձելու և պարտադիր կարգով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարելու պարտավորությունից:

Վերը նշված արտոնությունների կիրառման համար հիմք է հանդիսանում ՀՀ էկոնոմիկայի նախարարության կողմից հաստատված **տեղեկանքը** (տեղեկանքների ձևաթղթերը ձեռք բերելու համար պետք է դիմել ՀՀ էկոնոմիկայի նախարարության կազմակերպատնտեսական վարչություն, *հեռախոս՝ 52-60-55*, իսկ գործընթացի հետ կապված դիմել Եվրամիության և միջազգային տնտեսական համագործակցության վարչություն, *հեռախոս՝ 58-48-48*): Տեղեկանքը կազմվում է 4 բնօրինակից, որոնք լրացվում են գործողություններ իրականացնող կազմակերպության կողմից և ներկայացվում ՀՀ էկոնոմիկայի նախարարություն՝ հաստատման համար: Տեղեկանքը ՀՀ էկոնոմիկայի նախարարության կողմից հաստատվելու համար

անհրաժեշտ է ներկայացնել ՀՀ կառավարության 2009թ. սեպտեմբերի 23-ի N 1112-Ն որոշմամբ հաստատված կարգի 13-րդ կետով նախատեսված փաստաթղթերը:

ՀՀ էկոնոմիկայի նախարարության կողմից տեղեկանքները ստացվելուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում հաստատվում (կնքվում և ստորագրվում) են և տրամադրվում գործողություն իրականացնող կազմակերպությանը: Բնօրինակներից մեկը՝ հիմնավորող փաստաթղթի հետ միասին մնում է ՀՀ էկոնոմիկայի նախարարությունում: Մնացած 3 օրինակները տրվում են գործողություն իրականացնող կազմակերպությանը, որոնցից մեկը՝ ի պահ, երկրորդը՝ գործողություն իրականացնող կազմակերպությանը և երրորդ օրինակը՝ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ներկայացնելու համար: Այնուհետև գործողություն իրականացնող կազմակերպությունը հաստատված տեղեկանքը ՀՀ էկոնոմիկայի նախարարությունից ստանալուց հետո, անհրաժեշտ փաստաթղթերի հետ միասին պետք է ներկայացնի ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում:

ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը գործողություն իրականացնող կազմակերպության ներկայացրած տեղեկանքի հաստատումը և տրամադրումը կարող է մերժել, եթե ներկայացված փաստաթղթերը լինեն թերի կամ դրանցում լինեն անհամապատասխանություններ: Հաստատումը մերժելու դեպքում ներկայացվում է հիմնավորում: